ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՀՈՎՎԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայոց եկեղեցին, դատելով որոշ անուղղակի տվյալներից, մասնավորապես՝ Մեծ Հայքի թագավորությանը հարևան երկրների քրիստոնեական եկեղեցիների պատմությունից և վերջին հնագիտական պեղումներից, որոնք ապացուցում են քրիստոնեական եկեղեցիների գոյությունը Հայաստանում նախքան քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը, ունեցել է իր թեմական, թերևս ոչ կատարյալ, բաժանումը դեռ մինչև 301 թ., որի մասին, ցավոք, սկզբնաղբյուրները գործնականում տեղեկություններ չեն պահպանել: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո հայոց եկեղեցու թեմական բաժանումը ավարտուն տեսք է ընդունում, սակայն Սգաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ը միայն կցկտուր տեղեկություններ է պահպանել վերջինիս վերաբերյալ: Այդ պատճառով, ուսումնասիրողները՝ հայոց եկեղեցու թեմական բաժանումը քննելիս, առավելապես հիմնվում են Եղիշեի և Ղազար Փարպեցու, եկեղեցական ժողովների արձանագրությունների, մասնավորապես Դվինի 506 և 554 թթ. ժողովների, Ուխտանեսի, Ստեփանոս Օրբելյանի և որոշ այլ հաղորդումների վրա:

Ագաթանգեղոսի երկի մեզ հասած խմբագրված տարբերակում ասվում է, որ իբր Գրիգոր Լուսավորիչը Մեծ Հայքի տարբեր շրջաններում ձեռնադրել է 400 եպիսկոպոս[1]: Ըստ էության, սույն տեղեկությունը կրկնում է Ուխտանես պատմիչը, որի համաձայն Գրիգոր Լուսավորիչը հիմնել է 30 եպիսկոպոսական աթոռներ և դրանք թվարկելուց հետո ավելացնում է, որ նա ձեռնադրել է ևս 370 եպիսկոպոսների[2]: Ստեփանոս Օրբելյանի համաձայն, որը տեղեկությունը քաղել է Սամվել Կամրջաձորցուց (X դ.), Գրիգոր Լուսավորիչը հիմնել է ոչ թե 30, այլ 36 եպիսկոպոսական աթոռներ, որոնց տիրակալները՝ 18-ական աջ և ահյակ կողմերից, պետք է բազմեին կաթողիկոսարանում: Ըստ որում աջից առաջինը Հարքի եպիսկոպոսն էր, ձախից առաջինը՝ Բասենինը, աջից յոթերորդը՝ Սյունիքինը[3]: Սակայն Ստ. Օրբելյանը հաղորդում է ևս մի տեղեկություն, որ կարծում ենք հետաքրքիր է մեր հետագա քննության տեսակետից: Ըստ հեղինակի, Գրիգոր Լուսավորիչը կարգադրում է «Տրդատ Մեծին իր թագավորությունը կազմակերպել հունաց կայսրերի օրինակով և դահ ու աստիճան տալ իշխաններին՝ յուրաքանչյուրին ըստ պատշաճի, աջից ու ձախից, որը և նա

---

1 *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց. Տփղիս, 1909, « 856 (էջ 448):*

2 *Ուխտանէս եպիսկոպոս. Պատմութիւն Հայոց. Վաղարշապատ, 1871, գլ. Հ, էջ 100:*

3 *Պատմութիւն Նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1910, գլ. Է, էջ 25:*

իրագործում է գեղեցիկ կերպով: [Սահմանում է] ճաշի ժամին բարձերի վրա նստեն չորս հարյուր իշխաններ, բոլորից վեր՝ Գուգարաց բգեշխը և Աղձնեաց իշխանը, Անգեղտան իշխանն ու Կորգվաց իշխանը, Բագրատունի ասպետն ու Արծրունյաց իշխանը, Սյունյաց իշխանն ու Մամիկոնեից իշխանը»[4]:

Ն. Ադոնցը, քննության առնելով հայոց եկեղեցու թեմական բաժանումը, փաստարկված ցույց է տվել, որ 400 եպիսկոպոսների ձեռնադրումը պարզապես թյուրիմացություն է, որը խմբագիրների մեղքով տեղ է գտել թե՛ Ագաթանգեղոսի և թե՛ հետագա որոշ հեղինակների երկերում: Ներսես Մեծի վարքի համաձայն, կաթողիկոսը Արշակ II թագավորի ճաշասեղանի շուրջը 400 բարձեր հաստատեց: Այնուհետև հեղինակը փորձում է հակա-նե-հանվանե թվարկել այդ բարձերը զբաղեցնող իշխաններին, սակայն մի կերպ թվարկելով 132 անուն, որոնց մեջ կան կրկնություններ և Մեծ Հայքի հետ առնչություն չունեցող ցեղեր ու երկրներ, և 13 դահ չունեցող անուններ, նա գրում է, թե մնացածներին դժվարացել է գրի առնել[5]: Ինչպես վերը տեսանք, 400 բարձ կամ գահ զբաղեցնող իշխանների մասին հաղորդում է նաև Ստ.Օրբելյանը: Համադրելով պատմիչների տվյալները, մեծ հայագետը դալիս է այն եզրակացության, որ թյուրիմացության համար աղբյուր է ծառայել Զենոր Գլակի հաղորդումն այն մասին, որ Տրդատ Մեծը վրաց իշխանին հյուսիսականների արշավանքի դեմ որպես օգնություն է ուղարկում 30000-ոց բանակ Ապահունյաց իշխանի գլխավորությամբ, որը կարողանում է գերյալների միայն մի փոքր մասը ետ վերադարձնել, ձերբակալել հյուսիսականների երեք իշխանների և գերեվարել 400 ազնվականների, որոնց՝ բերելով Հայք, ներկայացնում են հայոց թագավորին: Վերջինս նրանց բանտարկում է Ողական ամրոցում և այնուհետև Ապահունիք շարժվելիս վերցնում է իր հետ և գրանցում արքունի դիվանում[6]: Ինչպես իրավացիորեն նշում է Ն.Ադոնցը, այս տեղեկությունը անուշադրության դեպքում կարող էր ընկալվել այն իմաստով, որ այդ իշխանները և 400 ընտիր ազնվական այրերը արժանացել են իշխանական աստիճանի, որն էլ պատճառ է դարձել չորս հարյուր գահերի մասին առասպելի հանգես գալու համար[7]: Հետևարար 400 եպիսկոպոսների՝ Գրիգոր Լուսավորչի կողմից ձեռնադրվելու տեղեկությունը առանձին արժեք չունի, առավել ևս, որ չի հաստատվում այլ տվյալներով:

Հիանալի լուծելով Գրիգոր Լուսավորչի կողմից 400 եպիսկոպոսներ ձեռնադրելու անհնարինության խնդիրը, Ադոնցը, սակայն, սխալվում է, երբ կարծում է, թե Գրիգոր Լուսավորչի կողմից ձեռնադրված եպիսկոպոսները ընդամենը 12-ն էին: Իրականում, ինչպես հաղորդում է Ագաթանգեղոսը, հայոց առաջին քահանայապետը եպիսկոպոս էր ձեռնադրել քրմական ընտանիքներից 12 հոգու՝ Աղբիանոսին, որ Եփրատական գետի կող-

4 Նույն տեղում, գլ. Է, էջ 24:

5 Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց հայրապետի. Վենետիկ, 1853, տե՛ս Սոփերք Հայկականք. Զ, էջ 32-39:

6 Հ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն յ ա ն. Տարոնի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Վարգան Վարդանյանի. Երևան, 1980, էջ 50-59:

7 Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 240—241.

մերի հոգևոր վերակացու նշանակվեց. Եվտաղիոսին՝ Բասենի կողմերի հովիվ. Բասոսին. Մովսեսին. Եվսեբիոսին. Հովհաննեսին. Ագապեսին. Արտիթեսին. Արսուկեսին. Անտիոքեսին. Տիրիկեսին և Կյուրակոսին՝: Որ կային նաև ձեռնադրված այլ եպիսկոպոսներ. պարզ երևում է Ագաթանգեղոսի նույն հաղորդումից, թե «եւ զայլոցն անուանս թէ և կամիցի ոք՝ ոչ կարասցէ չարել»[9]: (Եվ մյուսների անունները, եթե ինչ-որ մեկը կամենա, չի կարողանա թվարկել): Մենք դեռ այս խնդրին կանդրադառնանք, այժմ փորձենք պարզել եպիսկոպոսական աթոռների իրական թիվը:

Ինչպես ասվեց վերը, ըստ Ուխտանեսի և Ստ. Օրբելյանի եպիսկոպոսական աթոռների թիվը եղել է համապատասխանաբար 30 և 36: Ն.Ադոնցը, որ հակված է երկու հեղինակների հաղորդումների սկզբնաղբյուրը համարել Սամվել Կամրջաձորցու աշխատությունը կամ դրան նախորդած մի ինչ-որ ընդհանուր աղբյուր, ենթադրում է, որ թվական անհամապատասխանությունը թերևս պետք է բացատրել բացառապես Սամվել Կամրջաձորցու աշխատության այն օրինակով, որից օգտվել է Ստ. Օրբելյանը: Հեղինակը գտնում է, որ Սամվել Կամրջաձորցու աշխատության ցուցակը հազիվ թե տարբերվեր Ուխտանեսի ցանկից և որ եպիսկոպոսներին աջ ու ահյակ խմբերի բաժանելը հավանաբար Ստ. Օրբելյանի կռահումն է՝ հիմնված իշխանական գահերի աջ ու ահյակ կողմերով ներկայացնելու հետ[10]:

Եթե Սամվել Կամրջաձորցու մոտ եպիսկոպոսների ցուցակ եղել է, որ շատ հավանական է, ապա Ստ. Օրբելյանի երկը այն չի պահպանել, հետևաբար Ուխտանեսի ցուցակին մերձեցնող միակ փաստն այն է, որ աջից յոթերորդ գահն ստացած Սյունիքի եպիսկոպոսը Ուխտանեսի ցուցակում նույնպես յոթերորդն է, իսկ Հարքինը՝ առաջինը[11]:

Մի կողմից նմանությունը կարծես թե նշանակալից է, սակայն մյուս կողմից բոլոր հիմքերը կան կարծելու, որ Ուխտանեսի աշխատության մեջ թվարկված եպիսկոպոսական աթոռները չեն կարող վերագրվել Գրիգոր Լուսավորչի ժամանակներին, հետևաբար կամ նմանությունը պատահական է կամ էլ Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկությունը նույնպես չի վերաբերում հայոց առաջին քահանայապետի ժամանակներին,իրողություն, որն ինչպես կտեսնենք, հիմքեր չունի:

Փորձենք վերլուծել Ուխտանեսի եպիսկոպոսական աթոռների ցուցակը, որ ներկայացնում է ներքոհիշյալ պատկերը.

---

8 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, § 845:

9 Նույն տեղում:

10 Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана, с. 325—326.

11 Ստ. Օրբելյանի մոտ աջից առաջինը Հարքի եպիսկոպոսն է, յոթերորդը՝ Սյունիքինը: Ուխտանեսի ցուցակում առաջինը Հարքի Եպիսկոպոսն է, իսկ յոթերորդը՝ Սյունիքինը, հետևաբար, եթե Սյունիքի եպիսկոպոսը աջից է, ապա Հարքինն էլ է աջից, ուստի լրիվ անհասկանալի է Ն. Ադոնցի այն պնդումը, թե Սամվել Կամրջաձորցու մոտ առաջինը աջից Բասենինն է:

« 1. Հարքայ եպիսկոպոսն
2. Ոստան եպիսկոպոսն
3.Տայոց եպիսկոպոսն
4.Մարդաղոյ [եպիսկոպոսն]
5.Արշամունեաց [եպիսկոպոսն]
6. Արծրունեաց [եպիսկոպոսն)
7. Սիւնեաց [եպիսկոպոսն]
8. Ռշտունեաց [եպիսկոպոսն]
9. Մոկաց [եպիսկոպոսն]
10. Ամատունեաց [եպիսկոպոսն]
11.Բասենոյ [եպիսկոպոսն]
12. Մամկոնէից [եպիսկոպոսն]
13. Բաղրեանդայ [եպիսկոպոսն]
14. Խորխոռունեաց [եպիսկոպոսն]
15.Վանանդայ [եպիսկոպոսն]
16. Ապահունեաց [եպիսկոպոսն]
17.Արշարունեաց [եպիսկոպոսն]
18.Գնունեաց [եպիսկոպոսն]
19. Գողթան [եպիսկոպոսն]
20. Գարդմանայ [եպիսկոպոսն]
21. Ակէոյ [եպիսկոպոսն]
22. Բաժունեաց [եպիսկոպոսն]
23. Երուտակաց [եպիսկոպոսն]
24. Ասորեաց [եպիսկոպոսն]
25. Անձևացեաց [եպիսկոպոսն]
26. Պալունեաց [եպիսկոպոսն]
27. Մեհնունեաց [եպիսկոպոսն]
28. Ելոյ [եպիսկոպոսն]
29. Զարեհանից [եպիսկոպոսն]
30. Միւսաւորեաց [եպիսկոպոսն]

Այս երեսուն եպիսկոպոսք որք աթոռակալութեամբ ընկալան ձեռնադրութիւն ի սրբոյն Գրիգորէ, և այլ ևս երեք հարիւր և եւթանասուն Եպիսկոպոսք, որ և նոքա կարգեցան ի տեղիս տեղիս տեսուչք և Առաջնորդք յիւրաքանչիւր գավառս ի փառս Աստուծոյ»[12]: Եթե այս ցուցակը, թեկուզ պակասավոր, նույնական է Սամվել Կամրջաձորցու եպիսկոպոսական ցանկին, ապա սպասելի էր Բասենի եպիսկոպոսի անունը 19-րդ տեղում. իրականում այն զբաղեցնում է 11-րդ տեղը: Սա արդեն բավական կասկածելի է դարձնում երկու ցուցակների գոնե նույնությունը: Սակայն կա մեկ այլ հանգամանք ևս: Անվանապես հիշատակված եպիսկոպոսությունները, չնայած դրանց հիմնադրությունը պատմիչը վերագրում է Գրիգոր Լուսավորչին, իրականում զբաղեցնում են Մեծ Հայքի այն երկրամասերը, որոնք 428 թ. հետո մնացին Հայկական մարզպանության կազմում: Եվ իրոք, արդյ՞ոք զարմանալի չէ, որ Գրիգոր Լուսավորիչը եպիսկոպոսություններ չի հիմնադրում Աղձնիքում, Կորդուքում, Ծոփքում, Գուգարքում և մի շարք այլ վայրերում, որոնց գոյությունը փաստված է IV դարի սկզբին կամ կեսերին: Ցուցակում բացակայում են բոլոր ըդեշխությունների անունները, Մեծ Հայքի արևելյան երկրամասերը, 387 թ. բաժանման հետևանքով Հռոմեական կայսրությանն անցած երկրամասերը: Դժվար չէ տեսնել, որ այս ցուցակը ոչ այլ ինչ է, բայց եթե մարզպանական շրջանի՝ 428-451 թթ. փաստաթուղթ: Այդ է ցույց տալիս այն իրողությունը, որ ցուցակում հիշատակվում է Գարդմանի եպիսկոպոսությունը, որը 451 թ. հետո պետք է գտնվեր այսպես կոչված Աղվանից կաթողիկոսության ենթակայության ներքո: Բոլորովին չխորանալով ցուցակի նրբությունների մեջ, նշենք միայն, որ Ասորեաց և Միւս Ասորեաց (=Միւսաւորեաց) եպիսկոպոսությունները, ներկայացնելով, հավանաբար, Տմորիքի և ասորարնակ մի ինչ-որ շրջանի բնակչությունը, ենթարկվում էին ոչ թե ասորական եկեղեցիներից որևէ մեկին, այլ հայոց եկեղեցուն,

12 Ուխտանէս. Պատմութիւն Հայոց, էջ 100:

քանի որ նշված տարածքները վարչականորեն մտնում էին Հայոց մարզպանության մեջ: Այս իրողությունը, որ հաստատապես տեղ է գտել բոլոր երկերում, ինչպես կտեսնենք, իր մեջ կրում է Մեծ Հայքի եպիսկոպոսական թեմերի բացահայտման բանալին:

Ուխտանեսի եպիսկոպոսական ցուցակը հավաստում է, որ թեմական աթոռները ստեղծված են ավատատիրական վարչական բաժանմանը համահունչ, ուստի եթե այն համեմատում ենք Եղիշեի և Ղազար Փարպեցու եպիսկոպոսական ցանկերի, ինչպես նաև Դվինի 506 և 554 թթ. եկեղեցական ժողովների մասնակից եպիսկոպոսների ցուցակների հետ, ապա տեսնում ենք, որ դրանց բոլորին հատուկ է ավատատիրական վարչական բաժանմանը համապատասխանելը, որի հիմքում ընկած է ավատատիրական տիրույթը:

Փորձենք համեմատել 450 թ. Արտաշատի և Դվինի 506 ու 554 թթ. ժողովների մասնակից եպիսկոպոսների ցանկերը:

450 թ. ժողով	506 թ. ժողով	554 թ. ժողով
1. Յովսէփ կաթողիկոս ըստ Եղիշեի եպ. Այրարատոյ	1. Բաբկեն հայոց եպիսկոպոսապետ	1.Ներսէս հայոց կաթողիկոս
2. Անանիա Սիւնեաց	2.Մերշապուհ Մամիկոնէից	2.Մերշապուհ Տարաւնու եւ Մամիկոնէից եպիսկոպոս
3.Մուշէ Արծրունեաց	3.Ներսէս Մարգպետական	3.Գրիգոր Սեպհական գնդին
4. Սահակ Տարօնոյ	4.Տեառնտուր Հարքայ	4.Պարգեւ Հարքայ
5.Սահակ Ռշտունեաց	5.Սամուէլ Բզնունեաց	5.Տիրակ Բագրեւանդեայ
6.Մելիտէ Մանձկերտոյ[13]	6.Փովկաս եւ Ամուէլ Բասենոյ	6.Դրիդոր Բասենոյ
7.Եզնիկ Բագրեւանդեայ	7.Թաթուլ Արշարունեաց	7.Ներսէս Մարդաղ[ւ]ոյ
8.Աւրմակ Բզնունեաց	8.Աղան Խորխոռունեաց	8.Վաղոտ Արշամունեաց
9.Թաթիկ Բասենոյ	9.Ատատ Տայոց	9.Պետրոս Սիւնեաց
10.Երեմիա Մարգաստանի	10.Տաճատ Արշամունեաց	10.Գրիգոր Արծրունեաց
11.Գագ Վանանդեայ	11.Դանիէլ Ռշտունեաց	11.Մարկոս <Բզնունեաց>
12.Բասիլ Մոկաց	12. Յափիկ Մոկաց	12.Մաշղոց Խորխոռունեաց
13.Եղրայր Անձեւացեաց		
14.Տաճատ Տայոց		
15.Քասու Տարրերունոյ[13ա]		

13 Եղիշեի մոտ՝ Մեղէտ եպիսկոպոս Մանազկերտոյ և Քասու եպիսկոպոս Տուրուբերանոյ:

13ա Նույն տեղում:

16. Զաւէն Մանանաղ- ւոյ Եղիշե՝ Եւղաղ Մարդաղւոյ	13.Խաբիբ Արծրու- նեաց	13.Յոհան Ապահու- նեաց
17.Եղիշէ Ամատունեաց	14.Շահէ Ամատու- նեաց	14.Աբդիսոյ ասորեաց ուղղափառաց
18.Երեմիա Ապահու- նեաց[14]	15.Սահակ Պալու- նեաց	15.Յովնան Վանանդայ
	16.Պաւղոս Գնունեաց	16.Հաւուկ Արշարու- նեաց
	17.Մովսէս Զարիհո- ւանի	17.Քրիստափոր Պալու- նեաց
	18.Դավիթ Տմորեաց	18.Յոյս Գողթան
	19.Դանիէլ Անձեւա- ցեաց	19.Թադէոս Մեհնու- նեաց[17]
	20.Թեմուր Մեհնու- նեաց[15]	20 Խոսրով Ամատու- նեաց
	21.<Սիւնեաց>	21.Սահակ Ռշտունեաց
	22.<Մարդաղւոյ>	22.Սողոմոն Մոկաց
	23.<Վանանդի>	23.Ստեփաննոս Անձե- ւացեաց
	24.<Ապահունեաց>[16]	24.Հռոմանոս Ակիոյ
		25.Միքայէլ Զարէ- հաւանից
		26.Աստուածատուր Բժնունեաց[18]
		27.<Տայոց>
		28.<Գնունեաց>[19]:

450 թ. եկեղեցական այրերի և աշխարհիկ իշխանների ժողովին, որը պետք է պատասխան տար Հազկերտ II-ի հավատափոխություն պահանջող հրովարտակին, ինչպես տեսնում ենք, մասնակցել են ընդամենը 18 եպիսկոպոսներ, որոնց թիվը կարող է պահպանվել, եթե Հովսեփին, Եղիշեի համաձայն, դիտենք Այրարատի եպիսկոպոս և ընդհակառակը՝ պակասել, եթե ըստ Ղազար Փարպեցու, նա ներկայանում է որպես Հայոց կաթողիկոս: Սակայն հազիվ թե կարելի է կարծել, որ ժողովին մասնակցել են հայոց մարզպանության բոլոր եպիսկոպոսները: Քարտեզի վրա եպիսկոպոսությունների տեղադրության թռուցիկ փորձն անդամ հայտնաբերում

14 Եղիշէի վասն Վարգանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 27-28: Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան. Տփղիս, 1904, էջ 44-45:

15 Գիրք թղթոց, էջ 41-42:

16 Այս եպիսկոպոսությունների գոյությունը ենթադրելի է Դվինի 506 թ. ժողովի ժամանակ:

17 Գիրք թղթոց, էջ 73:

18 Հերթական յոթ անունները հանդիպում են Ներսես կաթողիկոսի մեղադրական թղթում (էջ 70):

19 Այս եպիսկոպոսությունները ենթադրելի են Դվինի 554 թ. ժողովի ժամանակ: Ցուցակների համեմատական քննությունը կատարել է Ն. Ադոնցը (Армения в эпоху Юстиниана, с. 329—333):

է դատարկություններ, որոնք անուղղակիորեն հավաստում են այլ եպիսկոպոսությունների գոյությունը: Թե որոշակի որքան է եղել եպիսկոպոսական թեմերի իրական թիվը, դժվար է ասել, սակայն մի բան հստակ է՝ այն 18-ից ավելի էր: Դվինի 506 և 554 թթ. ժողովների մասնակիցների ցուցակները ևս մտածել են տալիս, որ ոչ բոլոր եպիսկոպոսներն են մասնակցել դրանց: Համենայն դեպս, հազիվ թե կարելի է կարծել, որ 506 թ. Դվինի ժողովի հրավիրման ժամանակ, Սյունիքում եպիսկոպոսական թեմ գոյություն չուներ: Եթե Ն. Ադոնցի պես մտածելով, փորձենք Մարդաղիի եպիսկոպոսության կազմում 450 թ. տեսնել Արշամունիքը, իսկ 506 թ. Արշամունիքի տակ՝ նաև Մարդաղին, որը տեսականորեն միանգամայն հնարավոր է, ապա Սյունիքը ոչ մի կերպ հնարավոր չէ տեսնել որևէ եպիսկոպոսության կազմում: Այդ իսկ պատճառով, Դվինի 506 թ. ժողովի ժամանակներում, բացի ժողովին մասնակցած 19 եպիսկոպոսներից (20-րդը Հայոց կաթողիկոսն է կամ եպիսկոպոսապետը), որոնք ներկայացնում են Հայկական մարզպանության թեմերը, պետք է, որ լինեին, ինչպես ճիշտ նկատել է Ն. Ադոնցը, ևս 4 եպիսկոպոսներ, որոնք աթոռակալելու էին Սյունիքում, Մարդաղիում, Վանանդում և Ապահունիքում[20]: Դրանով եպիսկոպոսությունների թիվը, ամենայն հավանականությամբ ոչ լրիվ, դառնում է 23:

Թվում է, թե ավելի ամբողջական պատկեր կարելի է ստանալ Հայոց եկեղեցու թեմերի վերաբերյալ Դվինի 554 թ. ժողովի ժամանակներում: Ներսես կաթողիկոսի հրավիրած ժողովին մասնակցեցին 18 եպիսկոպոսներ, սակայն դա բնավ էլ իրական թիվը չէ: Պետք է այն ավելացնել թերևս ամենաքիչը 9-ով, որոնցից 7-ի անունները հանդիպում են Ներսես կաթողիկոսի մեղադրական թղթում, իսկ Տայքի և Գնունյաց եպիսկոպոսների գոյությունը, դատելով նախորդ ցանկերից, ենթադրելի է: Արանով եպիսկոպոսությունների քանակը հասնում է 27-ի, որը շատ չի տարբերվում Ուխտանեսի հաղորդման տվյալից և կարծես թե հաստատում է վերջինիս ճշտությունը, առավել ևս, որ ժողովին կարող էին չմասնակցել այլ եպիսկոպոսներ ևս: Փորձենք այժմ քննարկել Ուխտանեսի աշխատության մեջ հանդիպող և 450 ու 554 թթ. եպիսկոպոսական թեմերի ցուցակները:

Ուխտանես	450 թ.	554 թ.
1. Հարքայ եպիսկոպոսն	2 1[21]. Յովսէփ Այրարատոյ	12 1. Մերշապուհ Տարաւնու և Մամիկոնէից եպ.
2. Ոստան եպիսկոպոսն	12 2. Սահակ Տարօնոյ	2. Գրիգոր Սեպհական գնդին
3. Տայոց եպիսկոպոսն	1 3. Մեղեթ Մանազկերտոյ	1 3. Պարգեւ Հարքայ
4. Մարդաղւոյ	13 4. Եզնիկ Բագրեւանդեայ	13 4. Տիրակ Բագրեւանդեայ
5. Արշամունեաց	5. Սուրմակ Բգնունեաց	11 5. Գրիգոր Բասենոյ

20 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, с. 331

6. Արծրունեաց	3 6. Տաճաա Տայոց[21]	4 6. Ներսես Մարգաղ[ւ]ոյ
7. Սիւնեաց	11 7. Թաթիկ Բասենոյ	5 7. Վաղոտ Արշամունեաց
8. Ռշտունեաց	27? 8. Քասու Տուրուբերանոյ	7 8. Պետրոս Սիւնեաց
9. Մոկաց	9. Երեմիա Մարդաստանի	6 9. Գրիգոր Արծրունեաց
10. Ամատունեաց	4 10. Եւղաղ Մարդոյաղւոյ	10. Մարկոս <Բզնունեաց>
11. Բասենոյ	7 11. Անանիա Սիւնեաց	14 11. Մաշդոց Խորխորունեաց
12. Մամիկոնէից	6 12. Մուշէ Արծրունեաց	16 12. Յոհան Ապահունեաց
13. Բագրեանդայ	8 13. Սահակ Ռշտունեաց	24 13. Աբդիսոյ ասորեաց ուղղափառաց
14. Խորխորունեաց	9 14. Բասիլ Մոկաց	15 14. Յովնան Վանանդայ
15. Վանանդայ	15 15. Գաղ Վանանդեայ	17 15.Հաւուկ Արշարունեաց
16. Ապահունեաց	10 16. Եղիշա Ամատունեաց	26 16. Քրիստափոր Պալունեաց
17. Արշարունեաց	25 17.Եղբայր Անձաւացեաց	19 17. Յոյս Գողթան
18. Գնունեաց	16 18. Երեմիա Ապահունեաց[22]	27 18. Թադէոս Մեհնունեաց
19. Գողթան		10 19. Խոսրով Ամատունեաց
20. Գարդմանայ		8 20. Սահակ Ռշտունեաց
21. Ակէոյ		9 21. Սողովմոն Մոկաց
22. Բաժունեաց		25 22. Ստեփաննոս Անձեւացեաց
23. Երուտակաց		21 23. Հոռոմանոս Ակիոյ
24. Ասորեաց		29 24.Միքայէլ Զարէհաւանից
25. Անձեւացեաց		22 25. Աստուածատուր Բժնունեաց

21 450 և 554 թթ. եպիսկոպոսական ցուցակների թվահամարների դիմաց դրված է տվյալ եպիսկոպոսությանը համապատասխանող թվահամարը Ուխտանեսի եպիսկոպոսությունների ցանկում:

22 450 թ. եպիսկոպոսների ցուցակը, որոշ հանգամանքներից ելնելով, տրված է միայն ըստ Եղիշեի:

26. Պալունեաց
27. Մեհնունեաց
28. Ելոյ
29. Զարեհանից
30. Միւսաւորեաց
(– Միւս ասորեաց)

3 26. <Տայոց>
18 27. <Գնունեաց>:

Համադրական քննությունը ցույց է տալիս, որ Ուխտանեսի ցուցակում բացակայում են Բզնունյաց և Մարդաստանի եպիսկոպոսությունները, որոնք հիշվում են 450 թ. հրավիրված ժողովի ժամանակ: Սակայն դրա դիմաց Եղիշեի ցուցակում պակասում են Արշամունյաց, Խորխոռունյաց, Արշարունյաց, Գնունյաց, Գողթանի, Գարդմանի, Ակեի, Բաժունյաց, Երուտակի, Ասորյաց, Պալունյաց, Մեհնունյաց, Ելիի, Զարեհավանի և Միւս Ասորյաց եպիսկոպոսությունները: Ելնելով որոշ իրողություններից, որոնց քննությունը չի մտնում, ըստ էության, սույն խնդրի հետաքրքրությունների մեջ, Մեհնունյացը կարելի է նույնացնել Տուրուբերանի եպիսկոպոսության հետ: Մարդաստանի բացակայությունը, անհրաժեշտ կովանների չգոյության պատճառով, առայժմ բացատրություն չունի, եթե իհարկե այն չի նույնանում Երուտակի հետ, իրողություն, որ բոլորովին էլ հուսալի չէ: Ինչ վերաբերում է մյուսների իրական գոյությանը V դարի կեսերին, ապա կարծում ենք, որ դրա վրա ինչ-որ չափով լույս են սփռում Եղիշեի և Ղազար Փարպեցու աշխատություններում պահպանված իշխանական ցուցակները: Բավական է պարսից արքունիքի կողմից Տիզբոն կանչված հայ իշխանների ցուցակը համեմատել Արտաշատում ժողովի հավաքված եպիսկոպոսների անվանացանկի հետ, որպեսզի պարզ դառնա, որ Արտաշատ էին ժամանել այն եպիսկոպոսները, որոնք ներկայացնում էին հիմնականում հայոց մարզպանի անմիջական ենթակայության տակ գտնվող տարածքների և դավանափոխության դեմ տրամադրված իշխանների տիրույթների թեմերը: Այսպես, Այրարատը, Մանազկերտը, Բզնունիքը, Բասենը, Տուրուբերան-Մեհնունիքը, Մարդասանը և Մարդաղին արքունի կամ մարզպանական տիրույթներ են կամ մասամբ եկեղեցական, իսկ Տարոնի ու Տայքի, Սյունյաց, Արծրունյաց, Ռշտունյաց, Մոկաց, Ամատունյաց, Անձևացյաց և Ապահունյաց եպիսկոպոսությունները ներկայացնում են համապատասխանաբար Վարդան Մամիկոնյանի, Վասակ Սյունու, Ներշապուհ Արծրունու, Արտակ Ռշտունու, Արտակ Մոկացու, Վահան Ամատունու, Շմավոն Անձևացյացի և Մանեհ Ապահունու ժառանգական տիրույթները և մասամբ նրանց կառավարմանը հանձնված գավառները: Հետևաբար, Խորխոռունյաց եպիսկոպոսի բացակայությունը Արտաշատի 450 թ. ժողովում բացատրվում է ոչ թե Խորխոռունյաց եպիսկոպոսության չգոյությամբ, այլ ժողովից խուսափելով, որն արդյունք պետք է լիներ Գագիշո Խորխոռունու հակապստամբական տրամադրությունների: Գաբգմանի եպիսկոպոսի բացակայությունը հիշյալ ժողովում, կարծում ենք, նույն բացատրությունն ունի: Ինչ վերաբերում է մյուսներին, որոնց որոշակիացումը կապված է դժվարությունների հետ նյութի ըստ էության բացակայության պատճառով, ապա նրանց բացակայությունը կամ ժա-

ոանգատեր իշխանների հակաապստամբական տրամադրություններն էին կամ էլ անտարբերությունն ու զգուշավորությունը հակասասանյան պայքարի նկատմամբ:

Ուխտանեսի ցուցակը չունի, ինչպես ասվեց, Բզնունյաց եպիսկոպոսության անունը: Այս իրողությունը, որ առաջին հայացքից մեծ կարևորություն չունի, իրականում օգնում է պարզելու Ուխտանեսի եպիսկոպոսական աթոռների ցուցակի ստեղծման ժամանակը: 428 թ. պարսից արքունիքը գահընկեց արեց հայ Արշակունյաց արքայատոհմի վերջին ներկայացուցիչ Արտաշեսին և կաթողիկոս Սահակ Պարթևին, որի փոխարեն կաթողիկոսական աթոռ բարձրացվեց Սուրմակ Արծկեացի անունով մի երեց[23]: Սուրմակի իշխանությունը ընդամենը մեկ տարի տևեց: Շուտով իր վարք ու բարքով նա զայրացրեց հայ նախարարներին, որոնք նրան կարգալույծ արեցին և կաթողիկոսական աթոռ բարձրացրեցին Բրքիչոյ անունով մի ասորու: Սակայն պարսից արքունիքում չէին մոռացել Սուրմակի «ծառայությունները», այլ խոսքով դավաճանությունը, ուստի պարսից արքայի հրամանով նրան հանձնվեց Բզնունյաց եպիսկոպոսական թեմը[24]: 450 թ. ժողովի մասնակիցների մեջ հիշատակվում է Բզնունյաց Սուրմակ եպիսկոպոսը, որը, կարծում ենք, ոչ այլ ոք է, բայց եթե նույն Սուրմակ Արծկեացին: Ուստի, ելնելով վերը բերված փաստերից, կարելի է ենթադրել, որ ցուցակը ստեղծվել է Սուրմակ կաթողիկոսի օրոք, որը սեփականել է Բզնունյաց եպիսկոպոսությունը դեռ մինչև պարսից արքայից այն ստանալը, որի հետևանքով Բզնունյաց եպիսկոպոսությունը տեղ չի գտել Ուխտանեսի ցուցակի մեջ:

Ասվածի լույսով եթե անդրադառնանք վերը բերված եպիսկոպոսությունների ցուցակներին, կարելի է եզրակացնել, որ արդեն V դարի 20-ական թվականների վերջերից սկսած Հայկական մարզպանության տարածքում եպիսկոպոսությունների թիվը կազմել է շուրջ 30 կամ մի փոքր ավելի, կապված երկրի սոցիալ-քաղաքական զարդացման հետ, երբ ինչ-ինչ հանդամանքների բերումով որոշ եպիսկոպոսություններ տրոհվել են, ծնունդ տալով նոր եպիսկոպոսությունների կամ էլ երկու եպիսկոպոսություններ միացվելով հանձնվել են մեկ եպիսկոպոսի կառավարմանը: Ուխտանեսի ցանկից սկսած բոլոր եպիսկոպոսական ցուցակներին հատուկ է նրանց համապատասխանությունը Հայաստանի և Հայկական մարզպանության ավատատիրության հատուկ վարչական բաժանմանը:

Իսկ արդյո՞ք IV դարի սկզբին Մեծ Հայքի վարչական բաժանումը վառ արտահայտված ավատատիրական բնույթ ուներ:

Հարկ է նշել, որ եկեղեցական թեմական կամ եպարքիալ բաժանումները, որպես կանոն, համապատասխանել են անկախ պետությունների կամ Հռոմեական կայսրության պրովինցիաների վարչական բաժանմանը: Այսպես, երբ Կապադովկիա պրովինցիան բաժանվեց Առաջին և Երկրորդ Կապադովկիա անունը կրող պրովինցիաների (371 թ.), ապա շատ չանցած եկեղեցական եպարքիալ բաժանումը համապատասխանեցվեց նոր վարչա-

23 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Ս. Հարութիւնեան. Տփղիս, 1913, գիրք Դ, գլ. կգ:

24 Նույն տեղում:

կան բաժանմանը: Ուստի, ելնելով այս հիմնադրույթից, պետք է միանշանակ ընդունել, որ Գրիգոր Լուսավորչի հիմնած եպիսկոպոսությունները պարզելու համար V-VII դարերի եկեղեցական ժողովների նյութերը ապահով կռվաններ չեն կարող ծառայել, որովհետև Մեծ Հայքի թագավորության վարչական բաժանումը IV դարի սկզբին սկզբունքորեն տարբերվում էր V-VII դարերի վարչական բաժանումից, որն ինչպես տեսանք, տիպիկ ավատատիրական էր:

Իսկ ինչպիսի՞ն է եղել Մեծ Հայքի վարչական բաժանումը IV դարի սկզբին: Ալեքսանդրացի մեծ աշխարհագրագետ Կղավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության», «Աշխարհացույց»-ի (Հայկական Աշխարհագրության) և Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ի նյութերը օգնում են պարզելու Հայոց թագավորության վարչական բաժանումը:

Կղավդիոս Պտղոմեոսի՝ Մեծ Հայքի նկարագրության համաձայն, Հայոց թագավորությունը վարչականորեն բաժանվում էր 20 աշխարհների կամ նահանգների. Catarzene (Կղարջք), Obarene = Gogarene (Գուգարք), Otene (Ուտիք), Colthene= Caspiene (Կասպք), Sodukene (Ծավղեք=Արցախ), Sibakene=Sisakene (Սիսական-Այունիք), Sacapene=Sacasene (Շակաշեն), Basilisene=Basilikene (Արքունի երկիր կամ Ոստան), Bolbene=Bolxene (Բուղխա), Arsesa (Արսիք կամ Խաղտիք), Akilisene (Եկեղիք), Astaunitis (Հաշտեանք), Sophene (Ծոփք), Anzitene (Անձիտ=Աղձնիք), Thospitis (Տոսպք կամ Արևմտյան Վասպուրական), Cortaia=Cortaia (Կորճայք I), Bagrauandene (Բագրևանդ), Gordyene (Կորդուք), Cotaia=Co[r]taia (Կորճայք II) և Mardi (Մարդպետական)[25]: «Աշխարհացույց»-ի համաձայն Մեծ Հայքի թագավորությունը կազմված է եղել 15 աշխարհներից. Բարձր Հայք, Ծոփք (Զորրորդ Հայք), Աղձնիք, Տավրուբերան կամ Տուրուբերան, Մոկք, Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Այունիք, Արցախ, Փայտակարան, Ուտիք, Գուգարք, Տայք և Այրարատ[26]: «Աշխարհացույց»-ի Մեծ Հայքի նկարագրության քննությունը ցույց է տալիս, որ այն գրված է III դարի աշխարհագրերի (մարդահամարների) հիման վրա, որոնք ժամանակագրորեն մոտ են Պտղոմեոսի ապրած դարաշրջանին: Սակայն, քանի որ այն գրվել է V դարում, նրանում տեղ են գտել V դարի վարչաքաղաքական մի շարք իրողություններ: Այսպես. Կատարզենե-Կղարջքը միացվել է Օբարենե-Գոգարենե-Գուգարքին, ծնունդ տալով աշխարհացույցյան Գուգարքին, Տոսպիտիս-Տոսպքը՝ Մարդպետականին, ձևավորելով Վասպուրականը, Սակասենե-Շակաշենը՝ Ուտիքին՝ ծնելով աշխարհացույցյան Ուտիք աշխարհը, Բագրևանդը՝ Բասիլիկենե-Ոստանին՝ կազմավորելով աշխարհացույցյան Այրարատ աշխարհը, Արսեսա-Խաղտիքը հատվածաբար միացվել է Ակիլիսենին՝ առաջ բերելով Բարձր Հայքը, և Բոլխենե-Բուղխային՝ ձևավորելով աշխարհացույցյան Տայքը: Պտղոմեոսը Մոկքի գոյությանը տեղյակ չէ, որովհետև վերջինս ձևավորվում է միայն III դարում:

---

25 Claudii Ptolemaei Geographia e codicibus recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Müllerus, Voluminis primi, pars secunda, Parisiis, 1901, V, Cap. XII, 1–10

26 *Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց. Վենետիկ, 1881, էջ 29:*

Ձեռքի տակ ունենալով Պտղոմեոսի «Աշխարհագրության» և «Աշխարհացույց»-ի տվյալները և դրանք համադրելով Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ի տեղեկությունների հետ, դժվար չէ տեսնել, որ քրիստոնեության դարձի պատմիչի հաղորդումը ժամանակագրորեն միջանկյալ տեղ է գրաղեցնում նշված երկու սկզբնաղբյուրների միջև: Այն, ինչ գործնականում անհասկանալի է Ագաթանգեղոսի մոտ, իր լիակատար բացատրությունն է ստանում Պտղոմեոսի և «Աշխարհացույց»-ի տվյալների լույսով:

Իսկ ի՞նչ են ցույց տալիս Ագաթանգեղոսի հաղորդած տեղեկությունները: Պատմիչի վկայությամբ, «յայնժամ թագաւորն վաղվաղակի փութով և երկիւղիւ և մեծաւ խնդութեամբ հոգացեալ, գումարեաց զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն. առաջին իշխանն Անգեղ տան. երկրորդ իշխանն Աղձնեաց, որ է բդեաշխն մեծ. երրորդ իշխանն Մարդպետութեան իշխանութեանն. չորրորդ իշխանն թագակապ իշխանութեան ասպետութեանն. հինգերորդ իշխանն սպարապետութեան, զօրավար Հայոց աշխարհին. վեցերորդ իշխանն Կորդովտաց աշխարհին. եօթներորդ իշխանն Ծոփաց աշխարհին. ութերորդ իշխանն Գուգարացւոց աշխարհին, որ միւս անուանեալ բդեաշխն. իններորդ իշխանն Ռշտունեաց աշխարհին. տասներորդ իշխանն Մոկաց աշխարհին. մետասաներորդ իշխանն Սիւնեաց աշխարհին. երկոտասաներորդ իշխանն Ծաւդէից աշխարհին. երեքտասաներորդ իշխանն Ուտիացւոց աշխարհին. չորեքտասաներորդ իշխանն շահապ Զարաւանդ և Հեր գաւառի. հնգետասաներորդ իշխանն Մաղխազութեան տանն. վեչտասաներորդ իշխանն Արծրունեաց:

Այս իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք ի մեջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ, զորս գումարեաց թագաւորն Տրդատ և առաքեաց զնոսա ի կողմանս Կապուտկացւոց, ի քաղաքն Կեսարացւոց, զոր ըստ հայերէն լեզուին Մաժաք կոչեն. զի տարեալ զ Գրիգորն քահանայապետ կացուսցեն իւրեանց աշխարհին»[27]:

Դժվար չէ տեսնել, որ կաթողիկոս ձեռնադրելու համար Գրիգոր Լուսավորչին Կեսարիա ուղեկցեցին Մեծ Հայքի առավել նշանավոր իշխանները: Հետաքրքիր է, որ սրանք համարվում են կուսակալք և կողմնակալք, հազարավորք և բյուրավորք: Ուղեկցողներից Աղձնյաց և Գուգարաց բդեշխները, Մարդպետության, Կորդովտաց, Ծոփքի, Ռշտունյաց, Մոկաց, Սյունյաց, Ծավդեից և Ուտեացվոց իշխանները որոշակիորեն աշխարհների կուսակալներ էին, որոնցից 8-ին պատմիչը հստակ համարում է աշխարհի իշխաններ, իսկ Աղձնյաց բդեշխը և Մարդպետական իշխանը, թեկուզև անմիջականորեն, աշխարհի կուսակալ չեն հիշատակվում, ներկայացնում են Աղձնիք աշխարհը կամ, որ ավելի ճիշտ է, Աղձնիք աշխարհի արևելյան հատվածը, և Մարդպետական երկիրը, որը Պատմահայր Մովսես Խորենացու տվյալների համաձայն համապատասխանել է Արևելյան Վասպուրականին: Ոչ պակաս հետաքրքիր է, որ նշված աշխարհներն իրենց զուգահեռներն են գտնում, առաջին հերթին, Պտղոմեոսի «Աշխարհագրության» և այնուհետև «Աշխարհացույց»-ի Մեծ Հայքի նկարագրությունների մեջ:

---

27 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, § 795-796:

Սակայն մինչև զուգահեռներին անցնելը, տեսնենք, թե էլի ի՞նչ աշխարհի մասին տեղեկություն ունի Ագաթանգեղոսի պատմությունը:

Պատմիչը այլևայլ կապակցություններով հիշատակում է Անգեղ տան իշխանին,[28] Նոր Շիրական երկիրը կամ բդեշխությունը,[29] Կասպքը կամ Կասպից սահմանները արքունի Փայտակարան քաղաքով[30], Կաղարջքը[31], Խաղտեաց կողմերը կամ Խաղտեաց աշխարհը[32], Տարօնու երկիրը[33], Հայոց թագավորների ձեռական իշխանության երկիրը Ատրպատականում[34] և Այրարատյան կամ Այրարատ գավառը[35]: Եթե Անգեղ տան կապակցությամբ կարող են ինչ-ինչ կասկածներ ծագել, ապա Նոր Շիրականի բդեշխության, Խաղտիքի, Կաղարջքի, Տարոնո երկրի, Ատրպատականում ձեռական իշխանության երկրի, Կասպքի և Այրարատի աշխարհ լինելը ոչ մի տարակույս չի ծնում: Սակայն, ըստ էության, կասկածելի չէ նաև Անգեղ տան, մեզ անհայտ պատճառներով, Աղձնիքից անջատվելը և առանձին աշխարհի վերածվելը, որն իր մեջ պիտի առներ Մեծ Մոփքը և տարածվեր մինչև Եփրատ գետը: Վերը կատարված քննության արդյունքները քարտեզագրելու դեպքում հանգում ենք ներքոհիշյալ վարչական բաժանմանը:

Մեծ Հայքի վարչական բաժանումը IV դարի սկզբին ըստ Ագաթանգեղոսի	Ըստ Պտղոմեոսի «Աշխարհագրության»	Ըստ «Աշխարհացույց»-ի
1. Անգեղ տուն	--------	--------
2.Աղձնիք (արևելյան մասը)	Անզիտենե	Աղձնիք
3. Մոկք	--------	Մոկք
4. Ռշտունեաց աշխ.	Տոսպիաիս	Արմ. Վասպուրական
5. Կորդովտաց աշխ.	Գորգյուենե	Կորճայքի արմ. մասը
6. Արծրունեաց աշխ.	Կորաայա I	Կորճայք
7. Նոր Շիրականի բդեշխ.	--------	Պարսկահայք (հրվ. մասը)
8. Մարգպետական	Մարդոյ (Մարգի)	Արլ. Վասպուրական
9. Կասպք	Կոլթենե (=Կասպք)	Փայտակարան
10. Ուտիք	Օաենե	Ուտիք
11. Ծավդեք	Սոգուկենե	Արցախ
12. Սյունիք	Սիսակենե	Սյունիք (Սիսական)

28 Նույն տեղում, § 873:

29 Նույն տեղում, § 842, 873, 877:

30 Նույն տեղում, § 842: Կասպքի մյուս հիշատակությունը («19) չի վերաբերում Մեծ Հայքին:

31 Նույն տեղում, § 842:

32 Նույն տեղում, § 785, 842:

33 Նույն տեղում, § 809:

34 Նույն տեղում, § 842:

35 Նույն տեղում, § 21, 31, 122, 150, 776, 791, 803, 817, 841, 873 , 881:

13. Գուգարք	Օբարենե (–Գոգարենե)	Գուգարք (արլ. մասը)
14. Կաղարջք	Կատարզենե	Գուգարք (արմ. մասը)
15. _____.	Բոլխենե	Տայք
16. Խաղտիք	Արսեսա	_____.
17. Ծոփք	Սոֆենե	Ծոփք (Զորրորդ Հայք)
18. Զարավանդ և Հերդավառի շահապուրյուն	Կորտայա II	Պարսկահայք (հս. մասը)
19. _____.	Ակիլիսենե	Բարձր Հայք
20. Տարոնի երկիր	Աստաունիտիս	Տավրուբերան
21. Ատրպատական	_____.	_____.
22. Այրարատ	Բասիլիկենե և Բագրավանդենե	Այրարատ

Անգեղ տան անջատվելը Աղձնիքից, ամեն ինչից դատելով, տեղի ունեցավ III դարի վերջերին և իր արտահայտությունը գտավ Մծբինի 298 թ. հաշտության պայմանագրում[36]: Համենայն դեպս Անգեղ տունը առանձին վարչական շրջան չէր II դ. և III դ. առաջին կեսին, ինչպես հավաստում են Պտղոմեոսը և «Աշխարհացույց»-ը: Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի տեղեկություններից, ինչպես նաև Պատմահոր, Եղիշեի ու Ղազար Փարպեցու հաղորդումներից կարելի է եզրակացնել, որ մեծամեծ իշխանները աշխարհների կուսակալներ էին, հետևարար Անդեղտան իշխանի հիշատակությունը մեծամեծների շարքում անկասկած է դարձնում Անգեղտան աշխարհի կացություն ունենալը: Ռշտունյաց աշխարհի նույնացումը պտղոմեոսյան Տոսպիտիսին ունի հետևյալ բացատրությունը. հայտնի է, որ Մեծ Հայքի թագավորության բավական մեծ թվով իշխաններ մարտագաշտ էին դուրս բերում 1000 մարտիկներ, իսկ Բագրատունիները՝ անդամ 1500 զինվոր: Սակայն ունենալով, կարծես թե, հավասար ռազմական կարողություն, Ռշտունյաց և Արծրունյաց իշխանները երկրի կյանքում շատ կարևոր դեր էին խաղում՝ ի տարբերություն նույնպես 1000-ական զինվոր մարտադաշտ դուրս բերող Վանանդի, Ապահունյաց, Անձևացյաց և ուրիշ շատ իշխանների: Պատճառն այն էր, որ նրանք, բացի ժառանգատեր իշխաններ լինելուց, նաև աշխարհների կուսակալներ էին: Ռշտունիք գավառի Վասպուրականում գտնվող ինքնրստինքյան ենթագրում է, որ Ռշտունյաց աշխարհ պետք է կոչվեր Արևմտյան Վասպուրականը, քանի որ Վասպուրականի արևելյան մասը զբաղեցնում էր Մարդպետական իշխանությունը[37]: Ինչ վերաբերում է Արծրունիներին, ապա ելնելով Թովմա Արծրունու մի շատ արժեքավոր վկայությունից[38], պետք է ենթադրել, որ նրանք Կորճայքի կուսակալներն էին կամ ավելի ճիշտ՝ Արևելյան Կորճայքի, որովհետև Կորդուքը հարևան շրջանների հետ առանձին աշխարհ էր կազմում:

36 Petr. Patric., Fragm. 14 (Dindorf, Historici graeci minores. I, p. 443).

37 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, գիրք Բ, գլ. Է:

38 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն. Պատմութիւն տանն Արծրունեաց. Երևան, 1985, էջ 212:

Կասպքի համապատասխանությունը «Աշխարհացույց»-ի Փայտակարանին ապացուցվում է բոլոր աղբյուրներով, իսկ՝ պտղոմեոսյան Կոլթենեինը՝ վերջինիս աշխարհագրական հերթականությամբ. քանի որ նկարագրվում է Օտենե-Ուտիքից հետո և Սոգուկենե-Մավգեք-Արցախից առաջ[39]: Մավդեքի նույնացումը պտղոմեոսյան Սոգուկենեին և Արցախին ապացուցվում է Պատմահոր տեղեկությամբ և Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ Սյունիքի հետ Սոգուկենեի հարևանությամբ[40]: Խաղտիքը տեղադրվում է Ծորոխի ավազանում, որտեղ գտնվող Արսեաց փոր գավառի անունով Խաղտիքի մեկ այլ անվանումը Արսեսա է[41]: Ագաթանգեղոսի հիշատակած աշխարհների անվանումների մեջ բացակայում են երկուսը՝ Տայքը և Ակիլիսենե-Եկեղիքը: IV դարի սկզբի Մեծ Հայքի պատմաաշխարհագրական քննությունը և նշված նյութերի քարտեզագրումը ցույց են տալիս, որ այդ աշխարհներն իրոք գոյություն են ունեցել քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու շրջանում, որովհետև նրանց տարածքը ոչ մի կերպ հնարավոր չէ հատկացնել հարևան աշխարհներին:

Հարցիս քննության առումով որոշ հետաքրքրություն է ներկայացնում Ագաթանգեղոսի արաբական խմբագրությունը: Եթե հավատանք վերջինիս հավաստիությանը, ապա Գրիգոր Լուսավորիչը եպիսկոպոսներ ուղարկեց ոչ միայն հայկական աշխարհներն ու գավառները, այլև Վիրք, դուրձուկների ու ալանների երկրները: Այնուհետև պարզվում է, որ նա եպիսկոպոսներ է ուղարկել Անգեղտուն, Արզան կամ Աղձնիք, Մեծ Մոփք, Հաշտյանք, Սյունիք, Մոկք և Մարդպետական, իսկ քրիստոնեություն ընդունած և եպիսկոպոս ձեռնադրված քրմերի որդիներից Աղբիանոսին որպես թեմ հատկացրել է Բագրևանդը և Եփրատի առափնյա բնակիչներին. Եվտաղիոսին՝ Բասենը, Բասոսին՝ Կողը, Մովսեսին՝ Եկեղիքը և Դերջանը, Եվսերիոսին՝ Դարանաղին, Հովհաննեսին՝ Կարանը (որ Ն. Ադոնցը սրբագրում է Կարանիտիա), Հաբիբին՝ Սուսպիրը, Ալբիոսին՝ Տարոնը և Բզնունիքը, Արտիտեսին՝ Մաղխազների երկիրը, Արսուկեսին՝ Շիրակը, Անտիոքեսին՝ Կորդուքը, Տիրիկեսին՝ Աարպատականը և Կյուրակոսին՝ Արշամունիքը[42]: Ագաթանգեղոսի հայկական խմբագրությունը, բացառությամբ Ալբիոսի, հիշատակում է նշված եպիսկոպոսների անունները, սակայն բացի Աղբիանոսից և Եվտաղիոսից, որոնք եպիսկոպոսական աթոռներ են ստանում համապատասխանաբար Եփրատական գետի կողմերում և Բասենում, մյուսների թեմերը չի որոշակիացնում[43]: Ինչպես իրավացիորեն նշում է Ն. Ադոնցը, այս տվյալները չեն կարող օգտագործվել առանց նախնական քննության, սակայն միաժամանակ չենք կարող չնշել նաև, որ նրանցում կան որոշ արժեքավոր տեղեկություններ: Եթե Ալբիոսը սոսկ Ալբիանոսի կամ Աղբիանոսի աղավաղումը չէ, ապա հայկական Ագաթանգեղոսի

39 Claudii Ptolemaei Geographia, V. cap. XII, 4.

40 *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, գիրք Բ, գլ. ը:* Claudii Ptolemaei Geographia, V, cap. XII, 4.

41 Claudii Ptolemaei Geographia. V. cap. XII, 6.

42 Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана, с. 328 – 329.

43 *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, § 845: Ագաթանգեղոսի սարբեր խմբագրությունների մասին տե՛ս մանրամասն* G é r a r d G a r i t t e. Documents pour l'étude du livre d'Agathange. Citta del Vaticano, 1946.

տվյալները քրմական ընտանիքներից ձեռնադրված եպիսկոպոսների մասին լիովին համահունչ են արաբական խմբագրության տվյալներին: Սակայն Ագաթանգեղոսի երկի արաբերեն թարգմանությունը կատարվել է բավականին ուշ, ուստի Վիրքի, դուրձուկների և ալանների քրիստոնեացման պատմությունը անկասկած մուծվել է նրա մեջ թարգմանիչների կամ խմբագիրների կողմից: Մյուս տեղեկությունները, որոնք, մեր կարծիքով, արժանի են ուշադրության, հավաստում են, որ եպիսկոպոսություններ են հաստատվել իրոք Անգեղտանը, Աղձնիքում, Ծոփքում, Հաշտյանքում, որ այդ օրերին նույնական էր Տուրուբերանին[44], Սյունիքում, Մոկքում, Մարդպետականում, Կորդուքում, Ատրպատականում (= Հայոց թագավորների ձեռական իշխանությունը Ատրպատականում), այլ խոսքով Մեծ Հայքի 22 աշխարհներից 10-ը տեղ են գտել այս ցուցակում: Իհարկե, այս ցանկը լիարժեք չէ, ավելին՝ քաղկեդոնականության, թե այլ հանգամանքի հետ կապված, նշված եպիսկոպոսությունները առավելաբար տեղադրվում են Մեծ Հայքի արևմուտքում: Սակայն կարևորը մյուս հանգամանքն է, այն, որ պահպանվել է մի շատ կարևոր սկզբունք՝ եպիսկոպոսությունների հաստատումը Մեծ Հայքի աշխարհներում:

Ելնելով վերը կատարված քննությունից և Նիկիայի ու այլ եկեղեցական ժողովների արձանագրություններից, մեր կարծիքով, բոլորովին էլ հիմնազուրկ չեն Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունները Գրիգոր Լուսավորչի կողմից 36 եպիսկոպոսական աթոռներ հիմնելու մասին: Մեծ Հայքի 22 աշխարհներում, ելնելով երկրի վարչական բաժանումից, Գրիգոր Լուսավորիչը պետք է հիմներ եպիսկոպոսական թեմեր: Սակայն հարց է ծագում, թե որո՞նք էին մնացյալ 14 աթոռները:

Այդ հարցում մեզ օգնում են «Գահնամակի»-ի (Զորանամակ) տվյալները իշխանական ընտանիքների ռազմական կարողության մասին: Կասկածից վեր է և հասկանալի, որ գոնե IV դարի սկզբին եպիսկոպոսական թեմեր կարող էին հաստատվել առավել հզոր նախարարական ընտանիքների տիրույթներում: Ուստի հիմք ընդունելով, անշուշտ առայժմ պայմանականորեն, 500-ից ավելի զինվոր մարտադաշտ դուրս բերող իշխանությունները որպես եպիսկոպոսական աթոռներ ունեցող վարչական միավորներ, որոնց թիվը 27 է[45], փորձենք պարզել, թե սրանցից որոնք կարող էին եպիսկոպոսություններ ունենալ: Դժվար չէ տեսնել, որ այս ցուցակի նախարարների նշանակալից մասը եղել է աշխարհների կուսակալներ (ինչպես օրինակ՝ Անդեղ տան իշխանը, Աղձնյաց բդեշխը, Բագրատունին (Խաղտիքի կուսակալ), Ծոփացին, Գուգարաց բդեշխը, Կասպեցին, Ուտեացին, Ծավդեացին, Տայեցին, Մամիկոնյանը (Տարոնի երկիր), Սյունին, Կաղմեացին (=Նոր Շիրականի բդեշխություն), Կորդվացին, Արծրունին, Ռշտունին, Մոկացին): Թյուրիմացության հետևանքով, երբ արտագրության ժամանակ չփոթվել են «Մ» և «Տ» տառերը և դրա հետևանքով 200-ը վերածվել է 4000-ի, առանձնապես մեծ կարողություն չունեցող Ընծաքին

44 Յ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն ե ա ն. Պատմութիւն Տարօնոյ, աշխատությամբ և առաջաբանով Աշ. Աբրահամյանի. Երևան, 1941, էջ 46. Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, գիրք Բ, գլ. թ, իբ, լե, կբ, գիրք Գ, գլ., լա: Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, էջ 90, 134:

45 Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана, с. 251—252 (տե՛ս Զորանամակը):

իշխանությանը վերագրվել է 4000 զինվոր[46]: Այդ մեզ իրավունք է տալիս ցուցակը պակասեցնել ևս մեկ անունով: Իշխանական ցանկը այժմ ներկայացնում են ընդամենը 10 նախարարություններ. 1. Բզնունական, 2. Մանավազյան, 3. Խորխոռունի, 4. Վահունի կամ Վահևունի, 5. Ապահունի, 6. Բասենացի, 7. Կամսարական, 8. Վանանդացի, 9. Գարգմանացի և 10. Որդունի: Եթե մեր մոտեցումը ճիշտ է, իսկ այն, կարծում ենք, բավական տրամաբանական է, ապա Գրիգոր Լուսավորիչը եպիսկոպոսություններ հաստատեց նաև վերը նշված նախարարություններում: Անշուշտ այս կառույցը ծնում է նաև որոշ հարցեր: Օրինակ, IV դարի սկզբում Գնունիներն ունեցե՞լ են արդյոք սեփական եպիսկոպոսություն: Այս հարցին դժվար է միանշանակ պատասխանել: Բայց շատ հավանական է, որ այնուամենայնիվ, եթե Գնունիները եպիսկոպոսության աթոռ ձեռք բերեցին, ապա այդ կատարվեց միայն Խոսրով Գ Կոտակի օրոք:

Կարծում ենք, որ մեր այս ենթադրությունը եթե ոչ ամբողջությամբ, ապա նշանակալից չափով իր հաստատումն է գտնում կրկին Ագաթանգեղոսի արաբական տարբերակի նյութերում, որոնցում հիշատակվում են Բասենի (=Բասենացի), Կողի (թերևս Վանանդացի), Բզնունյաց (=Բզնունական), Շիրակի (=Կամսարական), Մաղխազների երկրի (=Խորխոռունի) եպիսկոպոսությունները: Սակայն ցուցակի քննությունը ցույց է տալիս, որ այն զերծ չէ նաև ուշ շրջանի ազդեցությունից:

Մնացյալ 4 եպիսկոպոսությունների մասին զարմանալի տեղեկություններ են պահպանել Նիկիայի 325 թ. ժողովի նյութերը: Պարզվում է, որ Մեծ Հայքի կողմից Նիկիայի ժողովի որոշումների տակ ստորագրել են 5 եպիսկոպոսներ՝ Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակեսը, Պեենպողեից Ակրիտեսը, , Ամասիայից Եվտիքիանոսը, Կոմանայից Հեղպիդիոսը և Զեղոնից կամ Զելոնից Հերակղիոսը[47]: Ոչ մի կասկած չկա, որ «Պէէնպողէն» մի ինչոր անվան աղավաղումն է: Նիկիայի ժողովի արձանագրության մեջ Ակրիտես եպիսկոպոսը կոչվում է Acrites Diospontanus[48]: Ինչպես ցույց է տվել Ն. Ադոնցը, Դիոսպոնտոսը, որ համարժեք է Pontus Amasia-ին, Կոստանդին Մեծի օրոք, ի պատիվ նրա մոր՝ Հելենեի, վերանվանվում է Հելենոպոնտոս[49]: Համաձայն Basilii Notitia-ի, Հելենոպոնտոսի կենտրոնն էր Ամասիան և նրա եպիսկոպոսական քաղաքներն էին Ամիսոսը, Ամինպեն, Իբոբան, Անդրապան, Զալիքոսը կամ Լեոնտուպոլիսը և Զելան[50]: Nova Tactica-ի նկարագրության համաձայն Հելենոպոնտոսի Զալիու քաղաքը կոչվել է նաև Պոմպեյուպոլիս[51]: Հելենոպոնտոսի երկու նկարագրությունների համադրությունը ցույց է տալիս, որ Nova Tactica-ի, Ð Ζαλ...ου-ն, Basilii Notitia-ի Ð Ζαλ...χου-ն է, հետևաբար Զալիքոսը կոչվել է ոչ միայն Լեոնտուպոլիս, այլև Պոմպեյուպոլիս: Հենց այս վերջին անվանումն

46 Նույն տեղում, էջ 251: Հին հայերենում «Մ»-ի թվային արժեքն է 200, իսկ «Տ»-ինը՝ 4000:

47 Կանոնագիրք Հայոց. հ. Ա, Երևան, 1964, էջ 141:

48 Joannes Duminius Mansi. Sacrorum Conciliorum Nova et Amplissima Collectio, vol. 2, 1960, Graz, էջ 694:

49 Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана, с. 85—86.

50 Basilii Notitia. տե՛ս Georgii Cyprii Descriptio orbis Romani, Lipsiae, 1890, էջ 13-14:

51 Nova Tactica, տե՛ս Georgii Cyprii Descriptio orbis Romani, էջ 67:

էլ անճանաչելիության աստիճանի աղավաղվել է հայկական թարգմանության մեջ և արտագրությունների ժամանակ վերածվել «Պէէնպողէ»-ի: Նիկիայի ժողովի ժամանակ Դիոսպոնտոսը տարածքային առումով պետք է ներկայացներ Ամասիա, Կոմանա, Զելա, Զալիքոս, ինչպես նաև Ամիսոս, Սինոպե, Իբորա և Անդրապա քաղաքներն իրենց շրջակայքով: Առաջին չորսի եպիսկոպոսները, ինչպես նշեցինք, Նիկիայի ժողովում հանդես են եկել Մեծ Հայքի կաթողիկոսության անունից: Ինչո՞ւ: Բացատրությունը մեկն է: Հիշյալ քաղաքները իրենց շրջակա տարածքներով կազմել են կայսրությունում հայոց թագավորների ձեռական իշխանության կալվածքները, իսկ Դիոսպոնտոսի հիշյալ քաղաքների եպիսկոպոսությունները էլ այդ պատճառով ենթարկվել են Մեծ Հայքի կաթողիկոսությանը: Հայոց թագավորների կալվածքների կենտրոնը, հավանարար, եղել է Պոմպեյուպոլիս քաղաքը, ուստի վերջինիս եպիսկոպոսը հանդիսացել է Դիոսպոնտոսի հայկական կալվածք հանդիսացող եպիսկոպոսությունների ղլխավորը և այդ պատճառով էլ կոչվել է Acrites Diospontanus և անգամ Acrites Armeni Diosponti: Հարկ է նշել, որ կայսրությունում հայոց թագավորների ձեռական իշխանության մասին առաջին տեղեկությունը հայտնում է Դիոն Կասիոսը, որի համաձայն Տրդատը III դ. սկզբներին Մակրինոս կայսեր կողմից վերստացել է այն բոլոր երկրները, որ նրա հայրը ձեռք էր բերել Կապադովկիայում[52]: Տեղեկությունը անորոշ է, որովհետև III դարում Կապադովկիա պրովինցիան ընդարձակ տարածություն էր զբաղեցնում և նրա մեջ էին մտնում Եփրատից արևմուտք գտնվող հայկական երկրամասերը: Հիշյալ Տրդատը Տրդատ II-ն է, որի հայրը՝ Խոսրով I-ը, կայսրությունում կալվածքներ էր ստացել հյուսիսկովկասյան լեռնականների դեմ պայքարելու համար[53]: Ս. Երեմյանը փորձել է հայոց թագավորների ձեռական իշխանության կալվածքը տեղադրել Փոքր Հայքում[54], սակայն Նիկիայի ժողովի հաղորդումները կասկած չեն թողնում, որ կալվածքները գտնվել են Դիոսպոնտոսում: Դրա հեռավոր արձագանք պետք է համարել այն հանգամանքը, որ Հերակլ կայսեր ժամանակ Երրորդ Կապադովկիան, որի մեջ մտնում էին Ամասիա, Իբորա, Զալիխոս, Անդրապա, Ամիսոս, Նեոկեսարիա և Ինոպե քաղաքները, ստանում է Արմենիակների անունը[55]:

Սրանով Ատ. Օրբելյանի հիշատակած 36 եպիսկոպոսությունների ցուցակը լրանում է: Անշուշտ կարող է հարց ծագել, թե ինչո՞ւ նշված 36 եպիսկոպոսությունների մեջ չէին կարող մտնել Վիրքի և Աղվանքի եպիսկոպոսները: Դրա պատասխանը տալիս են Մովսես Խորենացին և Փավստոս Բուզանդը[56]: 36 եպիսկոպոսությունները ստեղծվեցին քրիստոնեության

---

52 Տե՛ս մանրամասն Բ. Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ թագավորների ձեռական իշխանության հարցի շուրջը.– ՊԲՀ, 1988, № 4, էջ 54-55:

53 Cassii Dionis Cocceiani Historiae Romanae quae supersunt, Lipsiae, 1818, գիրք CXXIX, 27,4:

54 Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն. Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդալականացող Հայաստանում.– ՊԲՀ, 1971, № 1, էջ 6:

55 Const. Porph., De them., p. 31:

56 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, գիրք Գ, գլ. գ-զ: Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1832, գպր., Գ, գլ. զ-ե:

պետական կրոն հռչակման շրջանում: Իսկ Վրաց և Աղվանից եպիսկոպոս ձեռնադրված Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը ընդամենը 15 տարեկան էր, երբ Տրդատ III-ի գահակալության վերջում ուղարկվեց քարոզելու Հայոց Արևելից կողմեր, Վիրք և Աղվանք կամ Մասքթաց թագավորություն: Մինչ այդ որևէ փաստ չկա, որ վկայի Վրաց և Աղվանից եպիսկոպոսությունների մասին: Ավելին, Գրիգորիսը սպանվեց մասքթաց թագավոր Սանեսանի հրամանով և քրիստոնեությունը Վիրքում և Աղվանքում արմատավորելու փորձը ժամանակավորապես անհաջողություն կրեց:

Ի մի բերելով քննության արդյունքները, գտնում ենք, որ պետք է ընդունել Օրբելյանի հաղորդման ճշտությունը, որի համաձայն քրիստոնեության պետական կրոն հռչակման ժամանակներում Մեծ Հայքի կաթողիկոսը հաստատեց 36 եպիսկոպոսական աթոռներ, որոնց հիմքում դրված էր երկակի սկզբունք՝ թագավորության ըստ աշխարհների վարչական բաժանումը և ավատականության ուղին բռնած Հայաստանի առավել նշանավոր իշխանական ընտանիքներին եպիսկոպոսական թեմերի իրավունք տալը: Սակայն Մեծ Հայքի հետագա ավատականացումը, 387 թ. բաժանումն ու Հայ Արշակունիների թագավորության անկումը էական սրբագրություններ մտցրեցին եկեղեցական թեմական բաժանման մեջ:

ЕПАРХИАЛЬНОЕ ДЕЛЕНИЕ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ В ПЕРИОД АРХИПАСТЫРСТВА ГРИГОРА ПРОСВЕТИТЕЛЯ

БАБКЕН АРУТЮНЯН

Резюме

Проблема епархиального деления Армянской церкви в раннефеодальный период, в частности, в годы архипастырства Григора Просветителя, остается малоизученной, несмотря на блестящее исследование Н. Адонца. Основываясь на сообщении Степанноса Орбеляна о рукоположении Григором Просветителем 36 епископов, можно сделать вывод, что, в отличие от ситуации V—VII вв., отраженной в трудах Елишэ, Лазаря Парпеци, Ухтанеса и протоколах двинских церковных соборов 506 и 554 гг., в начале IV века епархиальное деление опиралось на два основополагающих принципа: на административное деление Царства Великой Армении на ашхары или области и феодальное землевладение. На основе данных "Географии" Клавдия Птолемея, "Истории Армении" Агафангела и "Ашхарацуйца" (Армянской Географии) показывается, что в начале IV века Великая Армения состояла из 22 областей, имевших свои епископства. Путем сравнительного анализа "Гахнамака" (Разрядная Грамота) или "Зоранамака" (Воинская Грамота) и других первоисточников доказывается, что крупные феодальные дома или нахарарства могли иметь свои собственные епархии. Согласно "Зоранамаку" их общее количество было 27, однако исключив тех нахараров, которые представляли также области, их число уменьшается до 10-ти. В список епархий Великой Армении входили также четыре епископства Диоспонта в Малой Азии, представители которых на Никейском соборе, вместе с

епископом Аристакесом, сыном Григора Просветителя, подписали соборный протокол. Епископства городов Амасии, Помпейополя, Зелы и Команы, находясь в собственных владениях Армянских Аршакидов на территории Римской империи, подчинялись католикосу Великой Армении. Иберия и Албания не могли быть представленными в списке епархий Армянской церкви, потому что в начале IV века еще не приняли христианство. Результаты исследования показывают, что сообщение Ст. Орбеляна о рукоположении Григором Просветителем 36 епископов соответствует исторической действительности.

THE EPARCHIAL DIVISION OF THE ARMENIAN CHURCH IN THE PERIOD OF ARCHPASTORHOOD OF GREGORY THE ILLUMINATOR

BABKEN HAROUTYUNYAN

S u m m a r y

The problem of eparchial or ecclesiastical organization of the Armenian Church in the Early Middle Ages in general and in the years of archpastorhood of Gregory the Illuminator in particular, remains scantily explored despite the brilliant investigation made by N. Adontz. The author referring the report of Stepannos Orbelian about the consecration of 36 bishops concludes that in contrast to the situation of the V–VII centuries, given in the works by Elishe, Lazar Parpetsy, Ukhtanes and in the reports of Duin Councils in 506 and 554, the eparchial division at the beginning of the IV century was supported by two basic principles; by administrative division of the Kingdom of Greater Armenia into ashkharhs or regions and by feudal domains. It is shown on the basis of the information of "Geography" by C. Ptolemy, "History of Armenia" by Agathangelos and "Ashkharhatsoits" (Armenian Geography) that at the beginning of the IV century Greater Armenia consisted of 22 regions, each of them having its own eparchy. With the help of comparative analyses of "Gahnamak" (Throne List) or "Zoranamak" (Military List) and other sources it is being proved that great feudal principalities having more than 500 soldiers could have their own eparchies. According to "Zoranamak" their total number was 27, but excluding those princes who also presented regions, the number gets reduced and becomes 10. The list of eparchies of Greater Armenia included also four eparchies of Diospontus in Asia Minor, the representatives of which together with bishop Aristakes, the son of Gregory the Illuminator, signed the report of Council of Nicea. The eparchies of the cities of Amasia, Pompeiopolis, Zela and Comana, being located in the feudal domain of the Armenian Arsacids on the territory of Roman Empire, were under the command of the Catholicos of Greater Armenia. Iberia and Albania (Caucasian) could not be presented in the list of eparchies of the Armenian Church, because at the beginning of the IV century they had not adopted Christianity yet. Summarizing the results of the investigation the author concludes that the report made by Stepannos Orbelian about the consecration of 36 bishops corresponds to historical reality.